ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հունիսի 26-29-ը ներառյալ Ֆրանսիայի քաղաք Փարիզ գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Նաիրուհի Ավետիսյան, ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ֆրանսիա, քաղաք Փարիզ, 2024 թ. հունիսի 26-29-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման և թափանցիկության գլոբալ ֆորումի քարտուղարություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման նպատակն էր մասնակցել ՏՀԶԿ կրիպտոակտիվների հաշվետվողականության շրջանակի (Crypto-asset reporting framework, այսուհետ՝ CARF) աշխատանքային խմբի 5-րդ աշխատաժողովին: ՀՀ ՊԵԿ-ը հանդիսանում է աշխատանքային խմբի անդամ, ուստի հանդիպմանը մասնակցությունը բխում է CARF ստանդարտի ներդրման պարտավորությունից:

5. **Քննարկված թեմաները.**

Հանդիպմանը քննարկվեցին մի շարք փաստաթղթեր, սակայն ինչպես նախորդ հանդիպումներին, այս հանդիպման ժամանակ ևս կարևորագույն հարցը նույնականացնել այն երկրների ցանկը, որոնք պարտավոր են ստանդարտն ընդունել 2027 թվականին: Մյուս երկրները կարող են ստնադարտն ընդունել 2030 թվականին: Այս պահի դրությամբ նույնականացված են թվով 65 երկրներ, որոնք պարտա-

վոր են ներդնել ստանդարտը 2027 թվականին: Հարկ եմ համարում նշել, որ հաստատված ցանկում հաստատված երկրների համար ստանդարտի ներդրումը պարտադիր է, սակայն կամավորության սկզբունքով երկրները ևս կարող են միանալ: Ցանկի ձևավորման համար հիմք է հանդիսանում տվյալ երկրներում կրիպտոակտիվների ոլորտի կարգավորման համար առկա բարենպաստ օրենսդրական կարգավորումները, FATF հետազոտության արդյունքները և համացանցում առկա տեղեկությունները:

Գլոբալ ֆորումի քարտուղարության կողմից մշակվել է նաև նոր փաստաթուղթ, որի լրացմամբ երկրները կարող են բացահայտել ստանդարտի ներդրման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ կատարելու քայլերի հաջորդականությունը (legislation checklist):

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկումները տեղի են ունենում ինտերակտիվ եղանակով, յուրաքանչյուր երկիր ներկայացնում է քննարկված փաստաթղթերի վերաբերյալ իր նկատառումները, ինչպես նաև ներկայացվում են հարցադրումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում քննարկված փաստաթղթերը մեկ անգամ ևս կշրջանառվեն աշխատանքային անդամ երկրների միջև՝ վերջնական հաստատվելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատանքային խմբի անդամները համաձայնեցին շարունակել աշխատելու բոլոր մշակված փաստաթղթերի ուղղությամբ, որպեսզի Գլոբալ ֆորումի տարեկան հանդիպման ժամանակ հնարավոր լինի հաստատել 2027 թվականին պարտադիր

կերպով կրիպտոկատիվների առաջին փոխանակումը իրականացնող երկրների ցանկը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Նաիրուհի Ավետիսյան

03/07/2024թ.